

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՔԱՅՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Երբ Տրդատը վերադարձին
 Թագապրսակ Գալլ գետ հասաւ,
 Դաւարագեղ գետի ափին
 Բանակ զարկել հրաման տրւաւ:
 Քաջ արքայի լայն նակատին
 Կը փայլէր մի ոսկեկոտ թագ.
 Հալուն թուրը կապած կըշտին՝
 Աչքերէն վար թափէր կըրակ:
 Հայն ու Հռոմ չորս դին առած՝
 Թագաւորին կեանք կը խնդրեն.
 Գետի սիրտն ալ կարծես փրլած՝
 Դուրս կը վազէ բարձր ափերէն:
 Երբ երկրորդ օր արեւ ծագեց,
 Արքայն պրսակ Մայր-Անահտին
 Ուռի ոստեր տալ հրամայեց.
 Պատուէրն իսկոյն ի գործ դրին:
 Կամարակալ բացին մի դուռ,
 Արեւու պէս շողար մեհեան,
 Անահտի կուտք ոսկեկոտ
 Վերամբարձած՝ բերին ատեան:
 Տեսան ամէնքն ու գետնամած
 Խոնարհեցան երեսն ի վայր,
 Սուրբ սրտերով բազկատարած
 «Փա՛ռք քեզ, կանչեն, ո՛վ Ոսկի Մայր»:
 Եւ ամէնքը թառստ ուռեր
 Կը նուիրեն մօրն ոսկեծին.
 Եւ Անահտի ոսկի պատկեր
 Կանաչ ուռով զարդարեցին:
 Արքայն կանգնած՝ մէկէն աչեց,
 Տեսաւ չըկար. «Ո՞ւր է Գրիգորն,
 Ասաց, նա դեռ ուռ չը բերեց
 Ոսկի տիկին Անահիտ Մօրն»:
 Եկաւ Գրիգոր: Գլուխը ծռած
 Երկրպագեց սէզ արքային,
 Թագի դիմաց աչքերը ցած.
 «Հրաման տրւէ՛ք, Տէ՛ր, ծառային»:
 «-Ո՞ւր ես, Գրիգո՛ր, ասաց արքայն,
 Ե՛կ, թաւ ոստեր տուր Անահտին.
 Տե՛ս, ամէնքն ալ պրսակ նորան
 Ուռի նիւղեր ընծայեցին»:
 «-Չէ՛, Տէ՛ր արքայ, ինձ կը ներես,
 Ուռեր տանել ես չեմ կարող».

Խաչի ծառան դու չը գիտե՞ս
 Հեքանոս չէ, կուռքը պաշտող»:
 «Արի՛, Գրիգոր, խնդրեց արքայն,
 Ե՛կ, Անահտին քաւ ոստեր տար.
 Մեր ամենփա նա՛ է պաշտպան,
 Սիրով պաշտէ զինքն Հայ աշխարհ»:
 «Զէ՛, արքայիս խաբելու չեմ,
 Թաւ ոստ տանել ես չեմ կարող.
 Հաւատք ունիմ, քրիստոնեայ եմ,
 Մոռնա՞մ խաչի լոյսը փրկող»:
 «Մի՛ ուշանար, գոչեց արքայն,
 Կանաչ ուռեր տա՛ր պատարագ.
 Թող Անահտին խաչի ծառան
 Պրսակադիր լինի արագ»:
 «Զէ՛, սո՞ւտ խօսիմ, ես արքայիդ
 Կո՛ւնի պրսակ տալ չեմ կարող.
 Թող կործանի քո Անահիտ,
 Խաչը կանգուն պայծառ տայ շող»:
 Ապշեց արքայն, կրքակ կտրաւ,
 Սիրուց՝ հանդարտ նորէն ասաց.
 «Գլխիդ, Գրիգոր, մի՛ բերեր ցաւ,
 Արքայիդ դուռ քեզ միշտ է բաց»:
 Ժպտաց ծառան, փայլեց աչքեր,
 Սիրտ առնելով նորէն ասաց.
 «Մի՛ կորսնցնեք երկնից փառքեր,
 Երկնքի դուռ քեզ միշտ է բաց»:
 «Մի՛ ուրանար դու Անահտին,
 Բզգաստութեան մեր մայրն է նա,
 Կեա՛նք բերեց նա մեր աշխարհին,
 Բաց աչքերդ ու հաւատա՛»:
 «Խոստովանէ՛ երկնից Տիրոջ,
 Ողջ աշխարհի Փրկիչն է նա,
 Մոռցի՛ր, Տրդատ, ոսկի տիկնոջ,
 Աչքերդ բա՛ց ու հաւատա՛»:
 Ինձ Անահիտն ասաց. Գընա՛,
 Մեհեաններուս փակ են դռներ,
 Խաչն յաղթանակ կանգնեց. գընա՛,
 Եկեղեցւոյ բաց են դռներ:
 Ինձ նա ասաց. Ով փրկութեան
 Զեռք տարածեց Խաչի վերայ,
 Մի՛ փորեր դու քեզ գերեզման,
 Ոսկի կո՛ւէն քեզ շահ չը կայ»:
 Ասաց, լրոնց: Ափիւրբան
 Կը նային չորս կողմ եղողներ.
 Եւ ապշած են. «Տե՛ս, այս ծառան
 Ոսկի մօրն ի՛նչ բերեց նրա՛ն»:
 Կատղեց արքայն, գոռաց, գանչեց,
 Գետափերուն սարսափ ձրգեց.

«Ինձ շահ չը կա՞յ ոսկի կոճէս,
 Թող հաչը քեզ փրկէ ձեռքէս»:
 Շուտով հրաման տուաւ արքայն,
 Իսկոյն դահին մի ներս մըտաւ.
 «Դահի՛ն, սորան տա՛ր ի գրնտան,
 Դա Անահտին կը լարէ դա»:
 «Սիրով կ'երթամ ես ի գրնտան,
 Տէրս ալ մեռաւ հաչի վերայ.
 Թող ես մեռնեմ խաւար մըքան,
 Խաչին արեւ քող քեզ լոյս տայ»:

* * *

Ծառան գընաց ի չարչարանք,
 Շատ տանջանքներ նորան տուին.
 Խոր վիրապէն վերջ արձագանգ
 Հնչեց ողջոյն Հայ աշխարհին:
 Եւ երբ ելաւ մըքին գըրէն՝
 Մեր աշխարհը լուսաւորեց,
 Արքայն եկաւ իւր ծառայէն
 Հաւատք ու կեանք շնորհել խնդրեց:

1887 Փետրուար 24

«Լուսինը, մայրիկ, ո՞ւր կ'երթայ այսպէս,
 Թեթեւ ամպերէն կը քոչի կարծես»:

«Լուսինը, ո՞րդեակ, ընկած Հայերուն
 Կ'երթայ լոյս վառել գերեզմաններուն»:

«Ո՞ւր ընկան Հայերն, ո՞վ ձրգեց նոցա,
 Մա՛յրիկ, ինձ ասա՛, լուսինն ո՞ւր կ'երթայ»:

«Լուսինը, ո՞րդեակ, նահատակներուն
 Կ'իջնէ լոյս ծագել սուրբ նշխարներուն»:

«Ինչո՞ւ պատերազմ, ո՞վ կըրակ վառեց,
 Մայրիկ, ի՞նչ բրինձ, ո՞վ վըրէժ ուխտեց»:

«Վայրագ բռնութիւն մեզ սրբի բերան
 Մաշեց, սեւ հողեր տուաւ գերեզման.
 Լուսինը կ'երթայ այրած հայրենեաց
 Վերայ արտասուել աչքերով քրջած»:

(Հատուած «Մշկի Քաջուհին» քերթուածէն)

Ո Ի Խ Տ

Մի հայրենեաց զաւակներ եմք,
 Մի մայր ծընաւ մեզ բոլորիս,
 Մուր բանտերի անարգ մահով
 Մեռնել այսօր մեմք ուխտում եմք:

Կենսատու շունչն ազատութեան

Մեր սրտերուն փրչեց ոգի,
 Էլ երկրաւոր բիրտ բռնութեան
 Մեմք չեմք լինիլ երբեք գերի:

Սուրբ հայրենեաց եմք զաւակներ:

Մեր հայրենին ինչո՞ւ ցայսօր
 Ըստրկութեան կուռ շղթաներ
 Իւր ձեռքերին կրէ դարեւոր:

Մի հայրենեաց զաւակներ եմք,

Մի մայր ծընաւ մեզ բոլորիս,

Պատերազմի դաշտը մեռնել

Հենց այսօր իսկ մեմք ուխտում եմք:

1882

ԿՈՐԻԻՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ